ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 31 օգոստոսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Հ. Թովմասյանի
Ֆ.Թոխյանի

Քննության առնելով Արտակ Գալստյանի
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Արտակ Գալստյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան վերստին ներկայացվել և մուտքագրվել է 2018 թվականի օգոստոսի 22-ին)՝ խնդրելով. «ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից 1998 թվականի հունիսի 17-ի ընդունված «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի» 204.32 հոդվածը և 2018 թվականի փետրվարի 09-ին ընդունված օրենսգրքի 414 հոդվածը (հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուժը կորցրած քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածը առանց բովանդակային և իմաստային փոփոխության իր արտահայտումն է գտել 2018 թվականի փետրվարի 09-ին ընդունված քաղաքացիական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածում) ճանաչել ՀՀ Սահմանադրության 28, 29, 60, 61, 63-րդ հոդվածներին հակասող և հակասահմանադրական»:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից՝ վիճարկվող որոշմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասահմանադրական է, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված անձի հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը: Ըստ դիմողի՝ վիճարկվող որոշմամբ վճռաբեկ դատարանը փաստացի սահմանափակել է իր արդարադատության մատչելիության և արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, որն էլ իր հերթին հանգեցրել է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ օրենքի առջև բոլորի հավասարության, անձնական կամ այլ շահագրգռվածությամբ խտրականության արգելքի, սեփականության իրավունքի, դատական պաշտպանության իրավունքի, արդար դատաքննության իրավունքի և իրավական որոշակիության սկզբունքների խախտումներին:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի, այդ թվում՝ դատական ակտերի, նախնական ուսումնասիրության արդյունքներից, դատական կազմը գտնում է, որ դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը կարող է Սահմանադրական դատարան ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո: Սույն գործով վերջնական դատական ակտ հանդիսացող՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

մերժելու մասին որոշումը կայացվել է 2017 թվականի հոկտեմբերի 4-ին, իսկ դիմողը Սահմանադրական դատարան դիմել է 2018 թվականի օգոստոսի 10-ին, այսինքն՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ: Ընդ որում, դիմողը չի ներկայացրել որևէ փաստ առ այն, որ նշյալ դատական ակտն իրեն հասանելի է եղել այլ ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 3-րդ մասով ՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Արտակ Գալստյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

31 օգոստոսի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/Ժ-2